ՔԱՐՈԶԽՕՍԱՔԱՂ

Տ. ՄԿՐՏԻՉ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՌՇՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ ԽՈՍՎԱԾ ԵՐԵՒԱՆԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՈՒՄ ՄԱՏՈՒՑԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(31 հոկտեմբերի, կիրակի, 2010 թ.)

ՅԱՆՈՒՆ ՀՕՐ ԵՒ ՈՐԴՒՈՅ ԵՒ ՀՈԳԻՈՅՆ ՍՐԲՈՅ. ԱՄԷՆ

«Ով ականջ ունի լսելու՝ թող լսի եւ իմանա,
Սակայն Զգույշ եղեք թե ինչպես եք լսում» (Ղուկ. Ը 18)

Վեհափառ Տեր, Գերաշնորհ Սրբազան Հայրեր, Հոգեշնոր Հայրեր եւ սիրելի հավատացյալներ,

Այսօր, երբ լույսի հրաշք շողերը թափվեցին մեր երկրի սրտին, Եկեղեցու Սուրբ խորանից, հնամենի զանգերի հետ հնչեց Աստուծո կենդանի այս խոսքը՝ ավետարանելով սկիզբը ձեռնադրության մեծ խորհրդի: Մայրացել է դարձյալ մեր Եկեղեցին, եւ մոռացվել են երկունքի ցավերը, հինն անցել է, եւ ամեն բան նոր է: Եւ ահա իբրեւ գորովագութ ու սիրող մայր՝ Եկեղեցին առաջին անգամ սուրբ Մյուռոնով լվանում է գլուխն ու ձեքերը իր նորածին քահանաների: Իր սիրո պես անտեսանելի, բայց իրական, փոխանցում է երկնային փեսայի Սուրբ Հոգու զորությունը: Հոգեւոր այս նոր ծնունդով, ինչպես երբեմն վերնատան մեջ, աշակերտները դարձել են առաքյալներ: Դարձյալ Աստծո զինվորյալ սպասավորներն են ծնվել՝ ի պաշտպանություն իրենց մոր ու ժողովրդի՝ մարտահրավեր նետելով նորօրյա Գողյաթներին. «Դուք մեզ վրա եք հարձակվում սրով, գեղարդով եւ վահանով, իսկ մենք ձեզ վրա ենք գալիս զորությունների Տիրոջ անունով»: Տեղին է հնչում օրվա ավետարանական խոսքը՝ «Ով ականջ ունի լսելու թող լսի եւ իմանա, Սակայն Զգույշ եղեք թե ինչպես եք լսում»:

Այդ նույն Աստվածային զորությունն է, որ այսօր աշակերտներին դարձնելով առաքյալներ՝ տալիս է երկնքի արքայության բանալիները, ըստ այն խոսքի, թե՝ քեզ պիտի տամ երկնքի արքայության բանալիները, եւ ինչ որ մի անգամ կապես երկրի վրա՝ կապված պիտի լինի երկնքում: Ինչ որ արձակես երկրի վրա՝ արձակված պիտի լինի երկնքում: Տիեզերական է, ուրեմն, օծման խորհուրդը, որի մեծագույն իմաստը Եկեղեցու անմահության խորհուրդն է:

Դարեր եկան, դարեր անցան, Էջմիածի՛ն,
Քո հիմն անշարժ ու անսասան, Էջմիածի՛ն.
Չե՛ս ձեռակերտ դու մարդեղեն առօրյա,
Դու շողակաթ լուսո խորան, Էջմիածի՛ն:

Բազմադարյան մեր պատմությունն իր այսօրվա ներկայով, մասնավորաբար Հայ Եկեղեցու մեջ տեղ գտած այսօրվա զարթոնքով, Ոսկեբերան մեծ Հայրապետի խոսքերը փոխ առած կրկնում է դարձյալ. «Եկեղեցուց զորեղ որեւէ բան չկա. Աշխարհ, ավարտի՛ր պատերազմդ, քանզի դու քո զորությունն ես նվազեցնում: Մի՛ պատերազմիր երկնքի դեմ: Եթե մարդու դեմ մարտնչես, հնարավորություն ունես հաղթանակելու, իսկ եթե կանգնես Եկեղեցու դեմ, անկարող ես սասանել նրան, քանզի ամենազոր է ապտվածային զորությունը.: Որքա՜ն բռնակալներ ցանկացան ճնշել, նվաճել Եկեղեցին, որքա՜ն գազանների ժանիքներ եւ երկսայրի սուսերներ... սակայն պարտվեցին: Եւ ահա՛, կա Եկեղեցին եւ պայծառ է ինչպես արփին»: «Ով ականջ ունի լսելու՝ թող լսի եւ իմանա»:

Երկինքն է բացել իր պատուհանները այսօր, եւ այս տեսարանին հանդիսատես՝ հոգեպարար ուրախության մեջ է երկնային, հաղթական մեր Եկեղեցին: Ահա մեր հավատի հայր Գրիգոր Լուսավորիչը համախումբ իր վարդապետներով, հոգեկիր այրերով, նման մեր անառիկ լեռների, թեւ թեւի, ծունկ ծնկի փառաբանական աղոթքն են մատուցում առ Բարձյալն Աստված, որ հավատարիմ իր խոստումին, անմար եւ պտղաբեր է պահում Լուսավորչի կանթեղը՝ Հայ Եկեղեցին:

Իսկ ներքեւում եկրային եկեղեցին ի գլուխ ունենալով Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց մեր սիրելի Հայրապետին՝ Մայր Աթոռի գինվորյալ եւ ուխտապահ միաբանությամբ եւ հավատավոր ժողովրդով՝ նման մեր անառիկ լեռներին՝ ուս ուսի, ծունկ ծնկի շարունակում են մշտավառ պահել անմար կանթեղը մեր հայրերի սրբազան հավատի: «Ով ականջ ունի լսելու թող լսի եւ իմանա»:

Եւ ահա ես, իբրեւ խորհրդակատար եպիսկոպոս՝ խոնարհվելով այս մեծ խորհրդի առջեւ՝ իմ որդիական շնորհակալությունն եմ հայտնում Ձերդ Վեհափառությանը, «զՔոյս ի քոյոց քեզ մատուցանելով»: Ապա, իբրեւ խոսնակ նորաոծ քահանաների, հավելում, որ Ոչ ոք չի կարող Աստծո ամրացրածը սասանել կամ ընդդիմանալ Նրա զորությանը, քանի որ մենք այսօր, իբրեւ նորաոծ քահանաներ, մեր «ձեռքը դնում ենք մաճին եւ եր չենք նայում», «վերցնում ենք մեր խաչը եւ քայլում մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի եւ մեր Սուրբ Հայրապետների ետեւից» եւ կրկնում մարգարեի խոսքերը. «Տեր, ահա Ես, առաքեա զիս»: «Ով ականջ ունի լսելու թող լսի եւ իմանա»:

Սիրելի նորաոծ քահանաներ,

Այսօր Աստծո նախախնամական կամքով, Օշականից բերել ենք մեր հայկական ինքնությունը կերտող ամենամեծ սուրբի՝ Մեսրոպ Վարդապետի օրհնությունները, եւ ինչպես արդեն ինքներդ հասկացաք, ձեր ձեռնադրության աղոթքներին շաղախեցինք մաշտոցաշունչ մեր ոսկեդարի անվանի հայրերի ոգին ու ներշնչանքը՝ ձեզանից ոմանց վերանվանելով նրանց պատվաբեր անուններով:

Արդ, իբրեւ այսօրվա մեծ խորհրդի պատգամ տալիս ենք ձեզ հայերեն առաջին նախադասությունը. «Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»: Իբրեւ սկիզբ ձեր մտածումների՝ խորհեցեք այն մասին, որ իմաստությունն ու խրատը ճանաչելը ինքնանպատակ չէ, այլ ուղղված է մի նպատակի. որպեսզի ճանաչեք Հանճարի խոսքերը: Հովհաննես ավետարանիչը խոսք է անվանում մեր տիրոջը՝ Հիսուս Քրիստոսին: Ասել է թե Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ մեզ այս նախադասությամբ պատվիրել են խրատի եւ

իմաստության միջոցով ճանաչելու մարմնացյալ Բանին: Իսկ ով ճանաչում է Քրիստոսին, որ է «ճանապարհ ճշմարտություն եւ կյանք», ճանաչում է ազատարար Ճշմարտությունը: «Ճանաչեք ճշմարտությունը, ճշմարտությունը ձեզ կազատի», այն ճշմարտությունը որ աշխարհ եկավ, «որպեսզի մենք կյանք ունենանք, եւ առավել եւս ունենանք»: Ուրիշ խոսքով՝ մեր հայրապետները մեկ նախադասության մեջ խտացրել են հայի կյանքի իմաստը, նպատակը: Ուրեմն դուք պարտական եք այս մեկ նախադասությանը այնքան, որքան բովանդակ ավետարանին: «Ով ականջ ունի լսելու թող լսի եւ իմանա»:

Սիրելի նորաոծ եղբայրներ,

Երրորդ հազարամյակի շեմին ձեզ է պատիվ արված լինելու մեր ընտրյալ ժողովրդի մեջ անտեսանելի Աստծո տեսանելի թարգմանիչները: Անտեսանելի Աստծուն լավագույնս թարգմանելու ձեր կարողությունից է կախված մեր ժողովրդի ապագան, եթե դուք լավ թարգմանիչներ եք, ուրեմն կենդանի է Աստված եւ նրա զորությունը՝ ի մեջ Հայկազյան ցեղի:

«Սխալ է կարծել, թե ժողովրդի ճակատագիրը կախված է միայն նրա աշխարհագրական դիրքից, նրա թվային մեծությունից, միջազգային բարենպաստ պայմաններից եւ կամ մարդկային արդարության ի կատար ածումից: Փոփոխական են այս երեքն էլ, եւ հաճախ դավաճանում է չորրորդը»: Բայց Աստված սահմանել է նաեւ իր օրենքը, արդարության օրենքը: Աստվածային արդարությունը գործող զորություն է, իրական ուժ, որ գործում է մարդու կամքից անկախ, եւ իրականանում ոչ ուշ եւ ոչ շուտ, ճիշտ ժամանակին: Ասել է թե դուք՝ որպես Աստծո այգու մշակներ, Աստվածային խոսքի թարգմանիչներ, եթե սերմանեք Տիրոջ արդարության սերմերը մեր ժողովրդի սրտերից ներս. «Մեր Եկեղեցին, եթե ոչ այսօր, ապա վաղն անպայման, Աճառյանի խոսքերով ասած՝ «պիտի դառնա ալեկոծ օվկիանում անխորտակելի սյուն, որից ամեն հայ իր պարանն է կապում փոթորից փրկվելու համար»: Մեր երկիրը՝ իբրեւ փարոս, որ «լուսավորում է խավարում, եւ խավարը չպիտի կարողանա այն նվաճել»: «Մանանեխի հատիկ, որ մեծ ծառ է դառնալու, որի վրա երկնքի թռչունները բույն են հյուսելու», քանզի ճշմարիտ է ավետարանական այն խոսքը թե՝ «Արդարը եթե 7 անգամ ընկնի, նորից պիտի ոտքի կանգնի»: Ուրեմն, եթե հավատարմորեն պահեք աստվածային արդարությունը Ձեր եւ Ձեր նմանների մեջ, Նա էլ անմահ կպահի ձեզ եւ Ձեր Ժողովրդին: «Ով ականջ ունի լսելու թող լսի եւ իմանա»:

Սիրելի նորաոծ քահանաներ եւ սիրելի ներկաներ,

Այսօր, երբ Իմանալի Արեգակի հրաշք շողերը թափվել են մեր Եկեղեցու սրտին, եւ նորովի է բաբախում սիրտը առաքելահաստատ մեր Սուրբ Եկեղեցու, մեկ անգամ եւս շնորհավորում ենք Ձեզ: Շնորհավորում ենք նորաոծ քահանաների ընտանիքի անդամներին, որ հետայսու Աստծո օրհնությունն առավել շատանալու է Ձեր ընտանիքներում, որովհետեւ «հովիւք քաջ եւ հովիւք բարի ընդ Ձեզ են»:

Այս Սուրբ Սեղանի առջեւ աղոթում ենք, որ Երկնավոր Հայրն անսասան պահի մեր Մայր Եկեղեցին, ամուր պահի առաքելաշավիղ նրա ընթացքը, եւ զորավոր պահի մեր Եկեղեցու գինվորյալ եւ ուխտապահ մշակներին՝ այսօր, վաղը եւ հավիտյան:

Թող Տիրոջ Սերը, Սուրբ Հոգու համբույրը լինի բոլորիս հետ այժմ եւ միշտ եւ հավիտյանս հավիտենից. Ամէն: